ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

,, 01,, օգոստոսի 2013թ. N 87

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1.<<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի տարրական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով դպրոցի ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Շառոյան Վ. – ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի նախագահ

Պետրոսյան Ս. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

Գևորգյան Ք. – հանձնող

Գևորգյան Լ . - ընդունող

Մարտոյան Ռ. - դպրոցի հաշվապահ

2. Հանձնաժողովին՝ /նախագահ՝ Վ. Շառոյան/ դպրոցի ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպել ս/թ օգոստոսի 15-ից, աշխատանքներին ընդգրկել նաև դպրոցի նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ Ժ/Պ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ